Զեկուցող՝ ԱԻՆ ՓԾ Շիրակի ՄՓՎ պետ,
փ/ծ գնդապետ՝ Մ.Յ.Սարիբեկյան

ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄՓՎ 2014թ. ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն գեներալ, սպաներ, տիկնայք և պարոնայք.

Հաշվետու ժամանակահատվածում Շիրակի ՄՓՎ գործունեությունն ուղղված է եղել քաղաքացիական պաշտպանության համակարգի կատարելագործմանը և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրների իրականացմանը:

Գործունեության հիմնական ուղղություններն են եղել՝

վարչության, փրկարարական և հրշեջ փրկարարական ջոկատների անձնակազմերի մարտունակության, մասնագիտական գիտելիքների և հմտությունների բարձրացումը.

- ոլորտին վերաբերվող իրավական ակտերի իմացության ապահովումը.
- ԱԻ կանխման, հետևանքների վերացման և դեպքերի օպերատիվ արձագանքումը.
- արտակարգ իրավիճակներում մարզի բնակչության վարվելակերպի կանոնների իրազեկվածության բարձրացումը.
- կառավարման մարմինների, կազմակերպությունների, օպերատիվ ծառայությունների հետ համագործակցության բարձացումը:

<u>2014թ. տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում գրանցվել է</u>՝

543 արտակարգ դեպք (2013թ.՝ 561), որոնց հետևանքով զոհվել է՝ 45 (2013թ.՝ 29), մարմնական վնասվածքներ ստացել (վիրավորվել)՝ 388 մարդ (2013թ.՝ 354):

Այսպիսով, 2014թ. տարվա ընթացքում մարզում 2013թ. համեմատությամբ գրանցված արտակարգ դեպքերի թիվը նվազել է 18-ով, (3,3%-ով), զոհերի թիվը աճել է 16-ով (55,2%-ով), իսկ վիրավորների թիվը աճել է 34-ով (9,6 %-ով):

Գրանցված դեպքերից՝

387՝ **տեխնածին են,** (2013թ.՝ 357 դեպք), որոնց հետևանքով զոհվել է 39 մարդ, (2013թ.՝ 21 մարդ), վիրավորվել՝ 253 մարդ, (2013թ.՝ 226 մարդ): Տեխնածին բնույթի արտակարգ դեպքերը աճել է 30 դեպքով կամ 8,4 %-ով, զոհերի թիվը աճել է 18-ով, կամ 85,7%-ով, վիրավորներինը՝ աճել է 27-ով, կամ 11,9%-ով: Գրանցված տեխնածին արտակարգ դեպքերից 206-ը հրդեհի դեպքերն են (2013թ.՝168), հրդեհների թիվը մարզում աճել է 38-ով, կամ (22,6%-ով): Հրդեհների հետևանքով զոհվել է 6 մարդ (2013թ.՝ 5), վիրավորվել՝ 6 մարդ (2013թ.՝ 4): Հրդեհների հետևանքով զոհերի թիվը աճել է 1-ով կամ 20%-ով, վիրավորներինը՝ աճել է 2 դեպքով, 50 %-ով:

<u>ԱԻ-ներից պատճառած նյութական վնասը կազմել է՝</u>

- ***<u>տեխնածին բնույթի ԱԻ-ից նյութական վնասը կազմել է՝</u>*** *86 մլն.841 հազ. 496դրամ,* (2013թ. - 43մլն. 104 հազ.778 դրամ): Նյութական վնասը աճել է 43մլն 736 հազ. 718 դրամով:

- 24-ը՝ տարերային են (2013թ.՝ 85 դեպք), դեպքերի թիվը նվազել է 61-ով, կամ 71,8 %-ով, որոնց հետևանքով 2014թ. զոհեր և վիրավորներ չեն արձանագրվել, ինչպես 2013թ.-ին:

<u>տարերային բնույթի ԱԻ-ից նյութական վնասը կազմել է՝</u> *3 մլրդ.359մլն 572 հազ. դրամ,* (2013թ. – վնասը կազմում է 487մլն դրամ, նյութական վնասը աճել է 2 մլրդ 872մլն 572 հազ դրամով):

Մարզում արձանագրվել է կարկտահարության 5 դեպք, տուժել են թվով 57 համայնք, վնասվել է 12652,648 հա գյուղատնտեսական մշակաբույսեր (2013թ.՝ 4 դեպք, տուժել են թվով 8 համայնք, վնասվել են 2107 հա գյուղ.մշակաբույսեր):

- 132-ը՝ սոցիալ-կենցաղային են (2013թ.՝ 119դեպք), որոնց հետևանքով զոհվել է 6 մարդ, (2013թ.՝ 8), վիրավորվել՝ 135 մարդ (2013թ.՝128): Սոցիալ-կենցաղային արտակարգ դեպքերն աճել է 13-ով (10,9%): Սոցիալ-կենցաղային արտակարգ դեպքերից զոհերի թիվն նվազել է 2-ով (25%-ով), վիրավորներինը աճել է՝ 7-ով, կամ 5,5 %-ով:

Հրդեհների գերակշռող մասը արձանագրվել է խոտածածք տարածքներում՝ 29,1%, իսկ բնակելի հատվածում՝ 27,2 %-ը: Ցածր է եղել տարերային բնույթի արտակարգ դեպքերի թիվը՝նվազել է 61 -ով կամ 71,8 %-ով: Թվով 24 դեպքից 10-ը ձնաբքի դեպք է (2013թ. – 70 դեպք), ձնաբքի դեպքերի թիվը նվազել է 60-ով կամ 85,7 %-ով, տարահանվել է թվով 41 մեքենա – 103 ուղեւոր,(2013թ. – 564 մեքենա – 1463 ուղեւոր):

Բարձր են եղել սոցիալ-կենցաղային բնույթի դեպքերի թիվը, 132 դեպքից 27-ը շմոլ գազի թունավորում, (2013թ. - 37) նվազել է 10-ով կամ 27 %-ով: Սննդային թունավորման դեպքերի թիվը՝ 4 ,(2013թ. - 7)նվազել է 3-ով կամ 42,8 %-ով: Բարձր է եղել թունավորման դեպքերը ալկոհոլից 25 դեպք ,(2013թ. 16) աճել է 9-ով կամ 56,3%-ով, արձանագրվել են նաեւ զինամթերքի հայտնաբերման 2 դեպք (2013թ. 17), նվազել է 15 –ով կամ 88,2 %-ով:

1.ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

Վարչությունն իր իրավասության սահմաններում արձագանքել է մարզում արձանագրված ԱԻ դեպքերին

- ժամանակին իրականացրել է մարզում արձանագրված հրդեհների հրդեհաշիջման աշխատանքները, հաշվետու ժամանակահատվածում ամենաշատ հրդեհներ մարվել են Գյումրիի ՀՓՋ կողմից - 129 (2013թ՝ 78) , Ախուրյանի ՀՓՋ- 26 (2013թ՝ 24), Արթիկի ՀՓՋ- 20 (2013թ՝ 37) , Անիի ՀՓՋ- 13 (2013թ՝ 12), Աշոցքի ՀՓՋ- 8 (2013թ՝ 7), Ամասիայի ՀՓՋ- 10 (2013թ՝ 4):

2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

- ՕԿՎ պարբերաբար ներկայացվել է ստորաբաժանումների ազդարարման սխեմաները և հավաքի գրաֆիկները:
- Յուրաքանչյուր եռամսյակ ՕԿՎ է ներկայացվել Շիրակի ՄՓՎ աշխատակիցների ճշգրտված հասցեները և հեռախոսահամարները:
- Գյումրիի զինվորական կոմիսարիատում զորահավաքային պատրաստության ուղղությամբ իրականացվել է կցագրված անձնակազմի և տեխնիկայի ուսումնասիրում
- Հաշվետու ժամանակահատվածում բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անցկացվել են ՀՇՈՒ, ՇՈՒ-ներ, օբյեկտային վարժանքներ,
- ՔՊ միջազգային օրվան նվիրված Շիրակի մարզի ուսումնական հաստատություններում անցկացվել են միջոցառումներ, որոնց տեսանյութերը ներկայացվել են ՓԾ:
- Տարվա ընթացքում մարզի գյուղական համայնքներում անցկացվել են թվով 30 շտաբային ուսումնավարժություններ:
- Մեթոդական օգնություն է ցույց տրվել շտաբային ուսումնավարժություններում ընդգրկված համայնքների ԲՊ ղեկավար կազմին, իրենց կողմից անցկացվող ՇՈՒ-ների անհրաժեշտ փաստաթղթերի կազմման ուղղությամբ:

- Մարզում ստեղծվել է թվով 42 հրշեջ փրկարարական թիմեր,որոնցում ընդգրկված են բարձր դասարանի թվով 539 աշակերտներ,
- Բելառուսի Հանրապետությունում անցկացվելիք պատանի հրշեջ փրկարարների միջազգային մրցաշարի անցկացման պայմանների համաձայն ձևավորվել է հավաքական թիմ՝ բաղկացած 17 աշակերտներից,
- Ս.թ. ապրիլի 17-ին մարզի պատանի հրշեջ- փրկարարների հավաքական թիմը մասնակցել է ք.Երևանում կազմակերպված պատանի հրշեջ-փրկարարների հանրապետական առաջնությանը՝ զբաղեցրել երկրորդ տեղը:
- Շիրակի ՄՓՎ-ի և Գյումրու ՀՓՋ-ի բազայի հիման վրա ստեղծվել է □Շիրակ□ քաղաքային որոնողափրկարարական միջին թիմը:
- Ս.թ. հունիսի 23-25-ը անցկացվել է «Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով վարժանքի փաստաթղթերի մշակման, տեխնիկական և վերահսկման դասընթացներ,ինչպես նաև ս/թ հունիսի 25-26-ը 36 ժամ տևողությամբ վարժանք:
- ՄՓՎ «Շիրակ» ՔՈՓ թիմի երեք անդամներ մասնակցել են սեպտեմբերի 23-24-ը Լուսակերտի բազայում անցկացված «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում » ծրագրի առաջին փուլի ամփոփմանը:
- 13.10-17.10-ը Գյումրի քաղաքում անցկացվել է «Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով վարժանք:

3.ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

- Ճշգրտվել են՝ մարզում առկա ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ավտոմոբիլային ճանապարհների և դրանք սպասարկող կազմակերպությունների վերաբերյալ տվյալները:
- Ս.թ մարտի 1-ից սկսվել և սեպտեմբերին ավարտվել է համայնքների ղեկավարների կողմից մարզի համայնքների տեղեկագրերի և ՔՊ պլանների լրամշակման գործընթացը:
- Ավարտված է մարզի սահմանամերձ գոտու համայնքներից տարահանված բնակչության տարահանման և տեղաբաշխման համայնքներում տարահանման և ընդունման հանձնաժողովների, հավաքակայանների ստեղծման գործընթացը:

- Հունիսի 30-ին ԲՊ բաժնի պետի կողմից Շիրակի ՄՓՎ սպայական անձնակազմից ընդունվել է ստուգարք՝ ՔՊ բնագավառը կանոնակարգող նորմատիվ-իրավական ակտերի իմացության վերաբերյալ:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենին է ներկայացվել Շիրակի մարզում տարածքում տեղադրված էլ.շչակների առկայության, դրանց տեխնիկական վիճակի և ազդարարման տեղամասերի վերաբերյալ տեղեկություններ, իսկ ազդարարման սարքավորումների պահպանման նպատակով գրությամբ առաջարկվել է ՀՀ Շիրակի մարզպետին մարզխորհրդի նիստում առաջարկել համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին, առկա ազդարարման սարքավորումները իրենց հաշվեկշռին ամրագրել և տեղերում նշանակել պատասխանատուներ :
- Ճշգրտվել և ՔՊՄԿ վարչություն է ներկայացվել Շիրակի մարզի բնակչության պատսպարման հաշվարկը:
- Փոխադարձ համաձայնությամբ մարզպետարանի համապատասխան կառույցների կողմից իրականացվել է <<Պարզագույն թաքստոց>> և <<Քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և վարվելակերպի կանոնները>> հուշաթերթիկները մարզի բնակչությանը հասցնելու գործընթացը:
- 2014թ-ի ընթացքում ՀՀ Շիրակի մարզի ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ ՇՄՓՎ ԲՊ բաժնի կողմից յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ անցկացվել է հրամանատարական պատրաստության պարապմունքներ՝ ՔՊ թեմաներով:

4.ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարզում բնակչության ազդարարումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է թվով 168 C-40 տիպի էլ.շչակ, իսկ առկա են ընդամենը 53-ը, որից սարքին է 29-ը, անսարք՝ 24-ը, պակասում է 115-ը:

5.ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

▪ Գարնանային վարարումների և սելավների ռիսկերից մարզի տարածքի բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու համար, անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների կատարման նպատակով, ուսումնասիրվել է մարզի գետերի հուների և սելավատարների վտանգավոր հատվածները և տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ ԱԻՆ ՓԾ:

▪ 2014թ-ի գարնանային հեղեղումների կանխարգելման պլանի համաձայն Գյումրու, Արթիկի, Մարալիկի քաղաքապետարանների, Աշոցքի, Ամասիայի, Ախուրյանի, Ազատանի համայնքապետարանների կողմից իրականացվել են հեղեղատարների մաքրման աշխատանքներ՝ 4670 մ երկարությամբ:

▪ Պլանից դուրս թվով 35 համայնքներում իրականացվել են հեղեղատարների մաքրման աշխատանքներ՝ 15700մ երկարությամբ:

▪ Գարնանային վարարումների և սելավների ժամանակահատվածում բնակչության և համայնքների ղեկավարների հետևողականության, պատասխանատվության բարձրացման նպատակով ՇՄՓՎ կողմից՝ ԶԼՄ-ների միջոցով իրականացվում են բացատրական աշխատանքեր:

▪ Ձմեռային ժամանակահատվածում մշտական ուշադրության կենտրոնում է եղել մարզի ճանապարհներին տիրող իրավիճակը, վարչության կողմից ԶԼՄ-րի միջոցով, բնակչությունը միշտ իրազեկված է եղել եղանակային փոփոխություններին և ճանապարհներին տիրող իրավիճակին: Ճանապարհներին արտակարգ պատահարների կանխարգելման նպատակով մշտական պատրաստ վիճակում է պահվել ճանապարհները սպասարկող կազմակերպությունների ինժեներական տեխնիկան և անձնակազմը:

▪ ՇՄՓՎ կողմից <<Թռչունյան տուն>>ՍՊԸ-ում, թիվ 13 <<Արարատ>> մանկապարտեզ կրտսեր-դպրոց կրթահամալիրում և Գյումրու <<Մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ (օժանդակ դպրոց)>> ՊՈԱԿ-ում անցկացվել են ուսումնական վարժանքներ <<Արտակարգ իրավիճակներում տարահանման կազմակերպումը>> թեմայով:

▪ Աղետակայուն մարզ ձեւավորելու նպատակով մարզում ստեղծվել է աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմը, որն հանդիսանում է աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման խորհրդատվական մարմին: Թիմն իր աշխատանքներին ներգրավել է մարզպետարանի, ՏԻ մարմինների, մարզի տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, մասնագիտացված կառույցների մասնագետների եւ փորձագետների:

▪ 19.03.2014թ. ժամը 10.00-ին Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի մոտ կայացել է աղետների ռիսկերի նվազեցման Շիրակի մարզային թիմի նիստը, որտեղ հատկապես կարևորվեց Հովունի համայնքի դպրոցի շենքի կապիտալ վերանորոգման համար կազմակերպչական և հետագա աշխատանքների իրականացման համար մարզային կառույցների հետ համագործակցության խնդիրները, ինչպես նաև դպրոցներում ԱՌՆ պլանների իրականացման նպատակով վարժանքների անցկացման, իրազեկվածության

դասընթացների կազմակերպման, <<Վորլդ վիժն ինտերնեյշնլ>>-ի և ՀՀ ԱԻՆ ՓԾ ՇՄՓՎ համագործակցության հնարավորությունները:

- Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Հարավային Կովկասում ծրագրի 1-ին և 2-րդ փուլերում ընդգրկվել են թվով 14 համայնքներ,իսկ 2014թ.-ին 3-րդ փուլում ևս 4 համայնքներ՝ Բերդաշեն, Ջորաշեն, Շիրակավան,Ջաջուռ :
- ՀՀ ԱԻՆ քաղավիացիայի և <<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի մասնագետների հետ համատեղ գլոբալ աղետների ժամանակ գործելու համագործակցության նպատակով <<Շիրակ>> օդանավակայանում 2014թ.-ի հուլիսի 9-ից 10-ը ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը ՀՀ ԱԻՆ-ը և DHLգերմանական փոստային գործակալության մասնագետները անցկացրել են GARD դասընթացներ, որտեղ քննարկվել են օդանավակայանի կարողությունների գնահատման մեթոդաբանությունը:
- Սողանքային աղետների կառավարման ծրագրի շրջանակներում Առափի համայնքում <<ԳԵՈՌԻՍԿ>> ՓԲԸ-ն ԱԻՆ և ՇՄՓՎ մասնագետների հետ համատեղ սողանքային տեղամասում իրականացրել է երկրաֆիզիկական հետազոտություններ, ճշգրտվել է երկրաբանական կտրվածքը, հայտնաբերվել է խախտումների գոտիները, կատարվել է երկու հորատանցքի հորատում և տեղադրվել երկու տվիչ մոնիտորինգ իրականացնելու նպատակով և սկսած 2014թ-ի դեկտեմբերի 10-ից՝ յուրաքանչյուր ուրբաթ մոնիտորիզնի արդյունքները ներկայացվում է ԲՊԱՀՎԿ վարչություն:
- ՇՄՓՎ կողմից համատեղ <<Save the children>> կազմակերպության հետ Գյումրի քաղաքի թիվ 7,11,16,31,38 դպրոցներում կազմակերպվել և անցկացվել են տարահանման վարժանքներ՝ համաձայն նախապես կազմված ծրագրի:

6.ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում ամենօրյա աշխատանքներ են իրականացվել փրկարարական ուժերի և տեխնիկայի մշտական մարտական պատրաստականության պահպանման ուղղությամբ:

Հաշվետու տարում հրշեջ-փրկարարական ջոկատներում, հրդեհավտանգ և կարևորագույն օբյեկտներում անցկացվել են հատուկ-տակտիկական ուսումնավարժություններ, ինչպես նաև կազմակերպվել և անցկացվել են հրշեջ ավտոմեքենաների շահագործման վերաբերյալ դասընթացներ, պարբերաբար ստուգվել են մարզի հրշեջ-փրկարարական ջոկատների ծառայության կրման ընթացքը: Հսկողություն է իրականացվել հրշեջ ավտոմեքենաների շահագործման և ելքերի գրանցման նկատմամբ:

Հրշեջ-մարտավարական վարժանքներ են անցկացվել՝

Գյումրի ՀՓՋ – 8, Անիի ՀՓՋ – 2, Ամասիայի ՀՓՋ - 3, Ախուրյանի ՀՓՋ - 8, Արթիկի ՀՓՋ - 9, Աշոցքի ՀՓՋ -10:

ՀՓՋ-ների կողմից կազմվել են հրդեհաշիջման քարտեր և օպերատիվ պլաններ՝

Գյումրի ՀՓՋ -27 քարտ և 6 պլան, Անիի ՀՓՋ – 9 քարտ և 1 պլան, Ամասիայի ՀՓՋ – 18 քարտ և 1 պլան, Ախուրյանի ՀՓՋ – 7 քարտ և 4 պլան, Արթիկի ՀՓՋ – 41 քարտ և 11 պլան, Աշոցքի ՀՓՋ -18 քարտ:

7.ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

2014թ-ի ընթացքում մարզային փրկարարական վարչության կողմից մշակվել են ՀՀ Շիրակի մարզպետի հաստատմանն է ներկայացվել թվով 9 որոշումների նախագծեր:

8.ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել կադրերի ընտրության ուղղությամբ՝

- ՇՄՓՎ ընդհանուր համալրվածությունը կազմում է 90,7 % - ըստ ստորաբաժանումների՝

ՇՄՓՎ - 95,3%, Գյումրիի ՀՓՋ - 81,3 %, Արթիկի ՀՓՋ - 91,6 %, Անիի ՀՓՋ - 97,2 %,
Ախուրյանի ՀՓՋ – 94,4 %, Ամասիայի ՀՓՋ – 97,2 %, Աշոցքի ՀՓՋ –82,8 %

- 2014թ-ի ընթացքում
  - ՇՄՓՎ և ենթակա ստորաբաժանումները համալրվել են - 39 ծառայողով,
  - մերժվել է 19 գործ
  - նախնական հրամանագրվել են և անցնում են փորձաշրջան 5 մարդ
  - ազատվել են ծառայությունից – 9 ծառայող
  - պաշտոնի փոփոխություն - 18 ծառայող
  - տեղափոխություն ծառայության ներսում – 2 ծառայող
  - խրախուսվել է - 11 ծառայող

– տույժի են ենթարկվել- 3 ծառայող
– արձակուրդից օգտվել են – 240 ծառայող
– վերապատրաստվել են- 21 ծառայող
– շնորհվել է 79 փ/ծ կոչում – մայոր – 1, կապիտան – 1, լեյտենանտ– 1, ենթասպա – 1, ավագ սերժանտ- 24, ավագ-16, սերժանտ-19, կրտսեր սերժանտ 156

- 2014թ անցկացվել է թվով 17 խորհրդակցություն

- պետի կողմից արձակվել է թվով 70 ներքին հրաման,
- մուտքի փաստաթղթերի քանակը կազմել է 1380 գրություն,
- ելքի փաստաթղթերի քանակը կազմել է 1468 գրություն:

9.ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

1. 2014 թվականի սկզբին Շիրակի ՄՓՎ Անիի թիվ 51 ՀՓՋ-ին տրամադրվել է ԶԻԼ-157 Կունգ ավտոմեքենա:
2. ՇՄՓՎ եւ ենթակա ստորաբաժանումների ողջ անձնակազմը ապահովված է փրկարարական հանդերձանքով:
3. Մարտական հաշվարկում գտնվող հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգումների համար տրամադրվել է շուրջ 20 տեսակի պահեստամասեր:

ՇՄՓՎ 2014թ-ի կոմունալ ծախսերն են՝

	հատկացված	օգտագործվել է	խնայվել է
Էլեկտրաէներգիա (կվտ/ժ)	197200	164606	32594
բնական գազ (մ3)	26900	25714	1186
ջուր (մ3)	5300	4310	1010

10.Շենք-շինություններում տարված աշխատանքների ուղղությամբ

Շիրակի ՄՓՎ- վերանորոգվել են ՇՄՓՎ շենքի տեղակայման վայրի Ի-ին հարկում տեղակայված 911-ի,Ի Ի-րդ հարկում տեղակայված ՃԿԿ, հանգստի և սերվերային սենյակները:
Հիմնովին վերանորոգվել և սալիկապատվել է զուգարանի պատերը և հատակը,
Վերանորոգվել և ներկվել են Ի-ից Ի Ի-րդ հարկ բարձրացնող աստիճանավանդակի պատերը: Մասնակի վերանորոգվել է կտուրը:
Բարեկարգվել է ՇՄՓՎ-ին հատկացված նոր տնակային շինության հարակից տարածքը:
Կատարվել են շինության ներսի միջնապատերի տեղափոխման աշխատանքներ սենյակների նոր տեսքով դասավորման համար:
Կառուցվել են ՇՄՓՎ պետի և տեղակալի, ՃԿԿ և ՃԿԿ պետի, ԲՊԲ և ԲՊԲ պետի, հրահանգիչների և ծառայողների համար նախատեսված սենյակները:
Տեղադրվել են նոր դռներ: Տեղափոխվել է շինության էլ.վահանակը:Կատարվել են էլ. լարերի մոնտաժման աշխատանքներ:
Կատարվում են շենքի ներսի հարդարման աշխատանքներ:
Ընթանում են ալեհավաքների համար նախատեսված աշտարակի մոնտաժման աշխատանքներ:
Շինվերանորոգման և տարածքի բարեկարգման համար կուտակվել է գիպսակարդոն, պրոֆիլ, տարբեր չափսերի դրսի հատակասալիկներ, ներկեր:
Գյումրիի №48 ՀՓՋ - բարեկարգվել է ՀՓՋ-ի բակի տարածքը, վերանորոգվել են ջրահեռացման ջրհորները:
Մասնակի վերանորոգվել է 1-ին հարկի դասասենյակը, սալիկապատվել է հատակը:
Վերանորոգվել են ՀՓՋ-ի խոհանոցը և 2-րդ հարկի դասասենյակը:
Նոյեմբեր ամսի կեսերից եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով շինվերանորոգման աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են:
Արթիկի №49 ՀՓՋ - հիմնավերանորոգվել է խոհանոցը, սալիկապատվել են պատերն ու հատակը, ներկվել է առաստաղը և հարակից միջանցքը: Բետոնապատվել և վերանորոգվել է 2-րդ հարկի դահլիճը:
Նոյեմբեր ամսի կեսերից եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով շինվերանորոգման աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են:
Անիի №51 ՀՓՋ - ձեռնարկվել են նոր ավտոտնակի կառուցման աշխատանքներ, փորվել և բետոնալցվել է ավտոտնակի հիմքը:
Կառուցվել է նոր երկտեղանի զուգարան:

Նոյեմբեր ամսի կեսերից եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով շինվերանորոգման աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են:
Աշոցքի №52 ՀՓՋ - բետոնապատվել է շենքի 2-րդ հարկ բարձրացնող աստիճանավանդակի հարթակները, վերանորոգվել է հանրակացարանի հյուրասենյակները, ամբողջովին նորացվել է շենքի էլեկտրական մալուխները:
Նոյեմբեր ամսի կեսերից եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով շինվերանորոգման աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են:
Ախուրյանի №53 ՀՓՋ - ԶԻԼ 131 (կունգ) մեքենայի կայանման համար կատարվել են շին-վերանորոգման աշխատանքներ 3-րդ ավտոտնակում, զոդման միջոցով վերանորոգվել է դարպասը:
Շենքի տանիքում տեղադրվել է 2,5 տոննա տարողությամբ ջրի 2 պահեստային տարրաներ:
Նոյեմբեր ամսի կեսերից եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով շինվերանորոգման աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են:

11. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարզում արտակարգ իրավիճակների կանխման, իսկ առաջացման դեպքում օպերատիվ արձագանքման, հետևանքների մեղմացման և վերացման աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով առաջարկվում է.

- Գյումրի քաղաքապետարանի կողմից ՄՓՎ-ին հատկացված տնակային շինությունը պահանջվող չափորոշիչներին համապատասխանեցնելու համար ֆինանսական և նյութական միջոցների հատկացում.
- ՀՓՋ-ի շենք-շինությունների վերանորոգման համար միջոցների հատկացում.
- ՇՄՓՎ-ին և ենթակա ստորաբաժանումներին համակարգիչների, տպիչ սարքերի □Scaner-ների) տրամադրում և ՀՓՋ-ներին հատկացված ինտերնետային □օպտիկա-մանրաթելային) ցանցի աշխատանքային վիճակի բերում.
- ՇՄՓՎ-ում առկա համակարգիչները ինտերնետային ցանցին միացնելու համար բաշխիչ սարքի և մալուխի տրամադրում.
- Գյումրի քաղաքում ստեղծել ևս մեկ ՀՓՋ
- ՀՓՋ-ներին ժամանակակից հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների հատկացում.
- ՀՓՋ-ներին GPS սարքերի տրամադրում.
- ՀՓՋ-ներին լեռնափրկարարական գույքի տրամադրում.
- Գյումրու թիվ 48 ՀՓՋ-ին ջրափրկարարական գույքի հատկացում:
- Գրասենյակային, տնտեսական և այլ աշխատանքների իրականացման համար ամսեկան ֆինանսական միջոցների հատկացում.
- ՄՓՎ և ՀՓՋ-ին գրասենյակային կահույքի հատկացում.
- Գյումրու ՀՓՋ-ին հավաքարարի հաստիքի հատկացում.
- ՄՓՎ ՃԿԿ հերթափոխ և օպերատիվ խումբ ձևավորելու համար համապատասխան հաստիքների հատկացում.
- ՄՓՎ ՀՓՋ-ներին դեպքերի օպերատիվ արձագանքման համար ծառայողական մեքենաների հատկացում.
- Աշոցքի և Անիի ՀՓՋ-ներին շնչառական ապարատների հատկացում.
- ՇՄՓՎ և ենթակա ստորաբաժանումներին հատկացվող վառելիքաքսուկային նյութերի չափաբաժինների ավելացում:

Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ,

փ/ծ գնդապետ՝ Մ.Յ.Սարիբեկյան

Շիրակի մարզային փրկարարական վարչության 2014թվականի հաստիքացուցակը

Հաստիքով նախատեսված	Փաստացի աշխատում են	Թափուր հաստիքներ

280	254 համալրվածությունը կազմում է 90,7%	26 թափուր հաստիքները կազմում է 9,3%
Շիրակի մարզային փրկարարական վարչություն		
21	20 (10 սպա) համալրվածությունը կազմում է 95,3%	1 թափուր հաստիք / 1 կրտսեր հրահագիչ/ կազմում է 4,7 %
Գյումրիի ՀՓՋ		
80	65 (6 սպա) համալրվածությունը կազմում է 81,3 %	15 թափուր հաստիքներ կազմում է 18,7 % /1 - հոգի ուս.փորձաշրջան/
Արթիկի ՀՓՋ		
36	33 (2 սպա) համալրվածությունը կազմում է 91,6%	3 թափուր հաստիքները կազմում է 8,4% /3 - հրշեջ/
Անիի ՀՓՋ		
36	35 (2 սպա) համալրվածությունը կազմում է 97,2%	1 թափուր հաստիքներ կազմում է 2,8% /1 - վարորդ/
Ախուրյանի ՀՓՋ		
36	34 (2 սպա) համալրվածությունը կազմում է 94,4%	2 թափուր հաստիքներ կազմում է 5,6% /2 - վարորդ/
Աշոցքի ՀՓՋ		
35	29 (2 սպա) համալրվածությունը կազմում է 82,8%	6 թափուր հաստիքները կազմում է 17,2% /հերթ.պետ-1,վարոր-4, ռ.հեռ.-1/
Ամասիայի ՀՓՋ		
36	35 (2 սպա) համալրվածությունը կազմում է 97,2%	1 թափուր հաստիքներ կազմում է 2,8% /1 - ռ.հեռ./